Արբուլք ցնորիւք զոտս հարկանել մէջ ծաղկանց,
Խայտիչագեղդ 'ի ցայգածին պիշ աչօք
Փողփողենէջ պարելոյդ քերբք լուսաղող,
Որք զառաջին յօդս առնէին քայլափոխ
Զերկայնս հեղեալ լուսագիսակս համասփիւռ
Մանուածաւալ 'ի նրնջախառն 'ի յաղբիւր ։
Բարէ՛, զո՞ս յա՛յնժամ լըսէիք, խա՛ղք հովիտք
Եւ ոպլխոխս յինէն ըղձից ձայնս և Թախիչ.
Ոչ ես անդ միտք յերկունս, այլ ծնունդք խնկաւէթք
Առ ապառումըն չըմառնեալք առ գըրիչ.
Ո՛հ, անդ սըրտիկ, անդ վայրքն էին քո ազատ,
Անդ անթարգման ըղձիցդ՝ ոչ համր էր բերանդ.
Նախանձաւորք քեզ ընդ Մասեաց արձագանգ
Յերկնից խորոց ուր տենչք Թռչնի՝ գայր քեզ վանգ,
Կամ թէ իցիւ իմ նախնեաց լեալ էր զաւակ
Հաստչին ձեռաց մինչ ոչ ծածկէր գիծ յերկրի
Եւ օրհնութեանց շուրջ զեղունն յորդ տարափք.
Կամ 'ի կրկնում նորակերտեըն աշխարհի՝
Ում ապաւէն արձանանայր քաջնափայլ
Ընդդայաղթ լեառն իմ զահեղ վրէժ լուծեալ.
Յոր սխրացեալ և հայէի սոգապանծ
Զհանուրց փրկիչն հովանի մեր Հայկազանց ։

. . . . . . .

. . . . . . .

Հ. Գ. Մ

Ըզլոյս մըտաց ետ ինձ տէր,
Զըստուգութիւն խորհրդեցի.
Մըտով զաշխարհ լի տեսեալ
Դարձուցանեմ զճրագս 'ի մայր ։
Սիրտ ետ ինձ տէր աղեկէզ,
Եւ կիրս անթիւրս կրեցի.
Եւ առ Աստուած սիրտ ըղձոյն
Զօնեմ անդրէն վըշտահար ։

ԲԱՐԱՄՁԻՆ ։